## ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**19.04.2016 11:30**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը 18.04.2016 թվականի թիվ 3-րդ նիստում ամփոփել է 2016 թվականի գարնանը կազմակերպած որակավորման քննությունների գրավոր առաջադրանքները:

Որակավորման քննություններին մասնակցել են Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի 2015 թվականի գարնանային հոսքի ունկնդիրները, ինչպես նաև 2015 թվականի աշնանային հոսքի՝ պարզեցված կարգով ուսուցում անցած այն ունկնդիրները, որոնք ունեցել են իրավաբանի 5 և ավելի տարիների աշխատանքային ստաժ (այդ թվում՝ հատուկ դիմորդները):

Որակավորման քննություններին մասնակցել են նաև 2015 թվականի աշնանը առանձին մոդուլներին չմասնակցած երկու ունկնդիր, ինչպես նաև 2015 թվականի աշնան որակավորման քննությունները չհանձնած և հատուկ ծրագրով ուսուցում անցած ևս երկու ունկնդիր:

Ընդհանուր առմամբ 2016 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցել են **93 ունկնդիր**:

Որակավորման քննությունները չեն հանձնել **16 աշխատանքների հեղինակներ**:

***2016թ. ապրիլի 19-ին ժամը ժամը 15.00-ին, ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ) կբացվեն կնքված արկղները: Արկղերը բացելուց հետո հնարավոր կլինի պարզել ծածկագրերի հեղինակներին:***

**Բեռնել «Որակավորման քննությունների գրավոր առաջադրանքների գնահատականները ամփոփելու մասին» 18.04.2016թ. թիվ 3-1-Ա որոշումը**

**ԴԵՈՆԹՈԼՈԳԻԱՅԻ ՄՈԴՈՒԼ**

**Բեռնել դեոնթոլոգիայի խնդիրներ լուծելու վերաբերյալ գրավոր առաջադրանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը**

**ՔՐԵԱԿԱՆ ՄՈԴՈՒԼ**

**Բեռնել միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավորառաջադրանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը**

**Բեռնել դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքներիամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՈԴՈՒԼ**

**Բեռնել հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը**

**Բեռնել վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի հեղինակների ցանկը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })